ու նեղ մասնագիտական, այդ պատճառով դժուարութեամբ է կարդացու�ում, չը նայած անգամ բրոշիւրի փոքր ծաւալին (37 երես)։ Մեզ թւում է, որ գիտական լրջութիւնը կարելի է միացնել ոճի պարզութեան և դիւրամատչելիութեան հետ. միայն այդ պայմաններում գիտութիւնը դադարում է մի քանի քուրմերի սեփականութիւն լինելուց։

Լ. Ս.

---

21) Отчетъ комиссіи присяжныхъ повѣренныхъ при Тифлисскомъ Окружномъ судѣ (съ 19 марта 1900 г. по 19-е марта 1901 г.)

—

Անցեալ տարի մարտ ամսին, Թիֆլիսի փաստաբանների ձեռներէցութեամբ և տեղիս նահանգական դատարանի հաւանութեամբ հիմնուեց Թիֆլիսում մի համակրելի հաստատութիւն՝ երդուեալ հաւատարմատարների մասնաժողով, իբրև դատարանին օժանդակիչ մնայուն օրգան։

Մասնաժողովի գործունէութեան շրջանը բացառապէս կազմում են երդուեալ փաստաբաններին և նրանց օգնականներին վերաբերեալ գործերը, որոնք առաջ քննուում էին միայն դատարանի ընդհանուր ժողովում, ինչպէս և ուրիշ տեղերում, ուր չը կայ երդուեալ հաւատարմատարների խորհուրդ։ Հասկանալի է, որ դատարանը, իբրև պետական հաստատութիւն, ծանրաբեռնուած միայն իրան յատուկ պաշտօնական գործերով, ոչ բաւականաչափ ժամանակ և ոչ էլ միջոց ունի փաստաբանների գործունէութեան բարդ և փափուկ խնդրին հետևելու։ Այժմ այդ կարևոր և պատասխանատու գործը յանձնուած է նորերս կենսքի կանչուած հաստատութեան, իսկ դատարանին վերապահուած է բարձրագոյն ինստանցիայի դերը, ուր անցնում են մասնաժողովի որոշումները։

Պարզ է, որ դրանից փաստաբանական էտիկայի փափուկ խնդիրն աւելի կը կանոնաւորուի և ցանկալի ուղղութիւն կը ստանայ, ինչպէս այդ տեսնում ենք այն դատաստանական շրջաններում, ուր շատ տարիներ գործում են երդուեալ հաւատարմատարների խորհուրդները։

Անցեալ մարտ ամսին լրացաւ Թիֆլիսի վերոյիշեալ մասնաժողովի գործունէութեան առաջի տարեշրջանը. այդ առիթով հրատարակուած տարեկան տեղեկագրից երևում է, որ անցեալ տարի Թիֆլիսի նահանգական դատարանի շրջանում հաշւում էր 59 երդուեալ հաւատարմատար և դրանց 25 օգ-

նականներ. տարուայ ընթացքում ընդունուած են 11 երդ. հաւատ. և 16 օգնականներ։ Մասնաժողովը բացի վարչական մասից գլխաւորապէս զբաղուել է փաստաբանների այլ և այլ պարտազանցութիւններից ծագած գործերով և իր վճիռներում տուել է փաստաբանական էտիկային վայել պատշաճաւոր հրահանգներ. յայտնի դէպքերում մասնաժողովը յանցաւոր ճանաչուած փաստաբաններին դատապարտել է, ենթարկելով նրանց նկատողութեան կամ աւելի ծանր դէպքում զրկելով փաստաբանական պրակտիկայից որոշ ժամանակով։ Ընդհանրապէս այդպիսի գործերի թիւը տարուայ ընթացքում եղել է 35։

Անժխտելի է այդ հիմնարկութեան բարոյական ազդեցութիւնը փաստաբանական բարքերի բարւոքման վրայ. մասնաժողովի որոշումների հրահանգիչ ոգին, նրա իրական հսկողութիւնը փաստաբանների գործունէութեան վրայ այն հետևանքը կ'ունենայ, որ երդուեալ հաւատարմատարը, իբրև հասարակական պաշտօնեայ, աւելի գիտակցօրէն կը վերաբերուի իր գործին, և չի թոյլ տայ որևէ գործողութիւն իր բարձր կոչման հակառակ, քաջ գիտենալով, որ նրա վրայ հսկող աչք կայ և թէ ինքը իւրաքանչիւր անպատեհ արարքի համար պէտք է պատասխան տայ ընկերական դատի առաջ։ Ցանկանք կատարեալ և յարատև աջողութիւն այդ համակրելի հաստատութեան։

ՅՈՎ. ՍՊ.

---

22) Լ. ՄԱՍԵՐԵՆՑ. «Этюды по армянской діалектологіи. Часть II, выпускъ I. Сравнительная морфологія Мушскаго діалекта въ связи съ морфологіей грабара и среднеармянскаго.» (Ուսումնասիրութիւններ հայ բարբառաբանութեան մասին։ Մասն Բ. պրակ Ա. Համեմատական ձևաբանութիւն Մշի բարբառի՝ գրաբարի և միջին հայերէնի ձևաբանութեան հետ կից)։ Մոսկվա, 1901, մեծադիր 8⁰, եր XXI+186.

—

Այս աշխատութեան առաջին մասը հեղինակը տպել է 1897-ին, իբրև մագիստրոսական շարադրութիւն («Մշի բարբառի համեմատական ձայնարանութիւնը՝ գրաբարի ձայնարանութեան հետ կից»)։ Այս առաջին մասի առաջաբանից տեսնում ենք, որ իր գրուածքի նիւթը հեղինակը անձամբ հաւաքել է 1894 և 1895 թուերին Անդրկովկասում ճանապարհորդելով, Բաթումում, Թիֆլիսում և Էջմիածնում գտած մշեցիներից, որովհետև չէ կարողացել, ինչպէս ցանկալի էր, ուղևորութիւն կատարել Տաճկահայաստան և բուն տեղում, Մուշ քաղաքում և շրջակայ գաւառում, ուսումնասիրել այդ բարբառը։ Մշի բարբա-